ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__2768-Ա___ « 11 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈՒԴԱՊԵՇՏ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Առաքելյանի 08.07.2025 թվականի զեկուցագիրը և Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի կենդանիների ապաստարան հիմնադրամի (NOÉ Állatotthon Alapítvány) կողմից ստացված հրավերը.

1. Երևանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Առաքելյանին՝ 2025 թվականի հուլիսի 14-ից հուլիսի 17-ը ներառյալ գործուղել Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտ:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Առաքելյանի բացակայության ընթացքում, «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության փոխտնօրեն Վահան Ասատրյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246